քահանայ՝ կառավարիչն Հիւրանոցին, սկսած է գրել, կը գտնեմ՝

1619 *փետր.* 6, *Մոլինի Անկիւրացին . . . որ* 1 *Մայիսին առանձինն վէնետիկ գացած էր . . . ։*

Նոյնպէս. կ. Պոլսոյ Զաքարիա Պատրիարքն . . . (անըթեռնելի)։

—

կ. Պոլսոյ "կաթողիկէ Արձագանք„, թերթին մէջ 1913, *էջ* 507, *վատիկանի դիւանէն հանելով հրատարակուեցան Պօղոս Ե. Ս. քահանայապետին* 1613, *Հոկտ.* 20*ին գրած նամակն, եւ երկու յանձնարարականներ աշխարհաբար թարգմանութեամբ, զորոնք այստեղ կ'արտատպեմ։*

Ա. ՆԱՄԱԿ

([1]*կ. Ա.„ թրգմ. 1913, էջ 507. բնագիրը 1913, էջ 732։)*

Մատենադ. 46, Պօղոս Քահանայապետ Ե. յամին Թ. Նամակ 123, էջ 40։

Միրելի որդւոյ Զաքարիա վարդպ.ի, Լուսաչնորհ ի կոստանդնուպոլիս հանգող Հայոց եկեղեցւոյն,

ՊՕՂՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սիրելի որդեակ, ողջոյն եւ առաքելական օրհնութիւն։ Զանազան ժամանակներու մէջ քու մեզի ղրկած կրկին նամակներն ընդունե-